ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

ՇԵՇՏԱՁԱՅՆԴԱՐՁԱՅԻՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՀԱՐԱՅՈՒՅՑԱՅԻՆ ԴԵՐԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր *– շեշտաձայնդարձային հարացույցներ, ներքին բառակազմության տեսություն, ձայնդարձի լիաձայն և զրո աստիճաններ, ուժեղ ձևեր, թույլ ձևեր*

Ինչպես հայտնի է, հնդեվրոպական հիմքակազմության մեջ տարբերակում են բնավոր (թեմատիկ՝ e/o ձայնավորով վերջացող) և անբուն (աթեմատիկ՝ բաղաձայնով, ձայնորդով և e/o-ից տարբեր ձայնավորով վերջացող) հիմքեր: Բնավոր և անբուն հիմքերը միմյանցից տարբերվում են մի շարք առանձնահատկություններով և առաջին հերթին՝ շեշտաձայնդարձային օրինաչափությունների տեսանկյունից[1]: Բնավոր հիմքերի հոլովման և խոնարհման հարացույցում շեշտի դիրքը միշտ կայուն է. այն ընկնում է կա՛մ արմատի, կա՛մ էլ բնի ձայնավորի վրա. ընդհանուր առմամբ անփոփոխ է մնում նաև հիմքը՝ բացառությամբ բնի ձայնավորի և վերջավորության ձուլման որոշ դեպքերի[2]: Մինչդեռ անբուն հիմքերի հարացույցը բնութագրվում է շարժական շեշտով և ձայնավորային հերթագայությամբ: Հարացույցի ներսում շեշտի տեղաշարժի և ձայնդարձի հիման վրա ավանդաբար տարբերակում են ուժեղ և թույլ ձևեր. հոլովման հարացույցի ուժեղ ձևերն են եզակի ուղղական, կոչական, հայցական, մասամբ նաև ներգոյական, երկակի ուղղական, կոչական, հայցական և հոգնակի ուղղական, կոչական, հայցական հոլովաձևերը, իսկ մնացած ձևերը թույլ են. խոնարհման հարացույցում ուժեղ ձևեր են ներգործական սեռի եզակի թվի բոլոր ձևերը, մինչդեռ ներգործական սեռի երկակի և հոգնակի թվերի, ինչպես նաև միջին սեռի բոլոր ձևերը թույլ են[3]:

Չնայած հարացույցի անդամների բաշխումն ըստ ուժեղ և թույլ ձևերի հիմնականում նույնն է ավանդական և արդի հնդեվրոպաբանության տեսանկյունից, այդուհանդերձ արդի հնդեվրոպաբանության մեջ ուժեղ և

---

[1] Տե՛ս **Fortson B. W. IV,** Indo-European Language and Culture. An Introduction, Oxford: Blackwell, 2004, p. 77-78, 87-89, **Clackson J. ,** Indo-European Linguistics. An Introduction, Cambridge University Press, 2007, p. 92-99:

[2] Տե՛ս **Савченко А. Н.,** Сравнительная грамматика индоевропейских языков. М., 1974, с. 156, 160:

[3] Տե՛ս **Clackson J.**, նշվ. աշխ., էջ 79, **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 103, 87:

թույլ ձևերի համար վերականգնվող շեշտաձայնդարձային օրինաչափությունները սկզբունքորեն տարբերվում են ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված օրինաչափություններից: Արդ, սույն հոդվածում փորձ է արվում դիտարկել ավանդական և արդի հնդեվրոպաբանության հայեցակարգային առանձնահատկությունները հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում[1]:

Ինչպես հայտնի է, ավանդական հնդեվրոպաբանության մեջ հոլովական տիպերը սովորաբար նկարագրվում են հիմքերի վերջահանգ հնչյունի բնույթին համապատասխան, իսկ շեշտաձայնդարձային օրինաչափությունները նկատի են առնվում միայն օժանդակ կերպով. ըստ այդմ տարբերակում են պայթական բաղաձայնի հանգող հիմքեր, *s*-ահանգ հիմքեր, ռնգային և նայ ձայնորդահանգ հիմքեր, *i*-ահանգ, *u*-ահանգ և երկբարբառահանգ հիմքեր և այլն[2]: Մինչդեռ արդի հնդեվրոպաբանության մեջ շեշտը և ձայնդարձը դիտվում են որպես հ.-ե. հարացույցային տիպերը բնութագրող առավել կարևոր գործոններ, և, ըստ այդմ, տարբերակվում են շեշտաձայնդարձային մի շարք հարացույցներ[3]: Ընդ որում, կազմությամբ միանգամայն տարբեր հիմքերը կարող են ունենալ նույն տիպի շեշտաձայնդարձային հարացույց, իսկ կազմությամբ նույնական հիմքերը կարող են պատկանել տարբեր շեշտաձայնդարձային հարացույցների[4]:

---

[1] «Ավանդական (դասական) հնդեվրոպաբանության» (19-րդ դ. վերջին քառորդից մինչև 20-րդ դ. 60-70-ական թթ.) և «արդի հնդեվրոպաբանության» (20-րդ դ. 70-80-ական թթ. մինչև մեր օրերը) ժամանակագրական սահմանազատումը որոշ չափով պայմանական է, քանի որ հաճախ ավանդական հնդեվրոպաբանության շրջանի առանձին հետազոտողներ չափազանց կարևոր դեր են խաղացել արդի հնդեվրոպաբանության այս կամ այն տեսության ձևավորման հարցում, մինչդեռ ավելի ուշ շրջանի որոշ լեզվաբաններ առաջնորդվել են ավանդական հնդեվրոպաբանության հայեցակարգային չափանիշներով: Ըստ այդմ՝ երբեմն նույն լեզվաբանը կարող է դիտվել մասամբ որպես ավանդական հնդեվրոպաբանության հետևորդ, մասամբ էլ որպես արդի հնդեվրոպաբանության ներկայացուցիչ:

[2] Տե՛ս **Szemerényi O.,** Introduction to Indo-European Linguistics, Oxford University Press, 1996, p. 164-192, նաև՝ **Hirt H.,** Indogermanische Grammatik, Vol. 3: Das Nomen, Cambridge University Press, 2009, S. 33- 35:

[3] Տե՛ս **Eichner H.,** Zu Etymologie und Flexion von vedisch strī und pūmán. // Die Sprache, 1974, 20, S. 27-28, **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme des Indogermanischen. // Flexion und Wortbildung, Akten der V Fachtagung der Indogermanischen Gesellschaft, hrsg. von H. Rix, Wiesbaden, 1975, S. 262-264, **Mayrhofer M.,** Vorgeschichte der iranischen Sprachen; Uriranisch. // Compendium Linguarum Iranicarum, hrsg. von R. Schmitt, Wiesbaden, 1989, S. 14 ff., **Meier-Brügger M.,** Indogermanische Sprachwissenschaft, 9. Auflage, Berlin/New York, 2010, S. 328-329, 336-353, **Fortson B. W. IV,** նշվ. աշխ., էջ 107-110:

[4] Տե՛ս **Schaffner S.**, Das vernersche Gesetz und der innerparadigmatische grammatische Wechsel des Urgermanischen im Nominalbereich, Innsbruck, 2001, S. 76-93, **Widmer P.**, Das Korn des weiten Feldes. Interne Derivation, Derivationskette und Flexionsklassenhierarchie: Aspekte der nominalen Wortbildung im Urindogermanischen, Innsbruck, 2004, S. 49- 54:

Ինչ վերաբերում է հ.-ե. շեշտաձայնդարձային օրինաչափություններին, ըստ ավանդական հնդեվրոպաբանության՝ հարացույցի ուժեղ և թույլ ձևերը միմյանց հակադրվում են հետևյալ ընդհանուր սկզբունքի համաձայն. *ուժեղ ձևերում շեշտն ընկնում է հիմքի վրա, որն ունենում է լիաձայն աստիճանի ձայնավորում, իսկ թույլ ձևերում շեշտն անցնում է վերջավորության վրա, և այդ դեպքում հիմքը հանդես է գալիս ձայնդարձի զրո աստիճանի (այսինքն՝ ձայնավորազուրկ) ձևով*[1]. հմմտ. մի կողմից՝ հ.-ե. եզ. ուղղ. (*ph$_2$tér-s >) *ph$_2$tḗr «հայր», եզ. հայց. *ph$_2$tér-m̥, հոգ. ուղղ. *ph$_2$tér-es, եզ. սեռ. *ph$_2$tr-és/ós, եզ. տր. *ph$_2$tr-éi, մյուս կողմից՝ հ.-ե. ներկա եզ. III դ. *g^{wh}én-ti «հարվածում է, սպանում է», հոգ. III դ. *g^{wh}n-énti և այլն: Բայց հ.-ե. մի շարք անբուն հիմքերի հոլովական հարացույցների համար ավանդաբար վերականգնվող շեշտաձայնդարձային օրինաչափություններն ակնհայտորեն շեղվում են հիշյալ սկզբունքից: Այսպես, հ.-ե. *-es-/-os- ածանցով կազմված չեզոք սեռի վերացական անունների հ.-ե. հարացույցի թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերին բնորոշ է կայուն արմատական շեշտ և հիմքի լիաձայն աստիճանի ձայնավորում. հիմքակազմ ածանցը եզ. ուղղ.-հայց. հոլովաձևում պարունակում է *o, իսկ մնացած հոլովաձևերում՝ *e ձայնավոր[2]. օրինակ՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *mén-os-ø «միտք; ոգի», եզ. սեռ. *mén-es-os և այլն: Մյուս կողմից, *i*-ահանգ և *u*-ահանգ հիմքերի կանոնավոր տիպի դեպքում շեշտակիր հիմքը եզակի ուղղական և հայցական հոլովաձևերում հանդես է գալիս զրո աստիճանի, իսկ թեք հոլովաձևերում՝ լիաձայն աստիճանի ձայնավորումով. հմմտ. հ. հնդ. եզ. ուղղ. sūnú-s «որդի», agní-s «կրակ», եզ. հայց. sūnú-m, agní-m, եզ. սեռ. sūnó-s, agné-s, եզ. տր. sūnáv-e, agnáy-e և այլն[3]: Իսկ, օրինակ, հ.-ե. *pod-/*ped- «ոտք» անբուն հիմքի հարացույցի թույլ ձևերում, թեև շեշտն անցնում է վերջավորության վրա, շեշտազուրկ հիմքը հանդես է գալիս ոչ թե զրո, այլ *e լիաձայն աստիճանի ձայնավորով. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *pṓd-s «ոտք», եզ. հայց. *pód-m̥, հոգ. ուղղ. *pód-es, եզ. սեռ. *ped-és/ós, եզ. տր. *ped-éi և այլն[4]:

Շեշտաձայնդարձային հերթագայության ընդհանուր սկզբունքից նման շեղումները ավանդական հնդեվրոպաբանության մեջ մասամբ բացատրվում են որպես բաղաձայնային կուտակումից խուսափելու կամ համաբանական փոփոխության արդյունք, մասամբ էլ ձայնդարձի լիաձայն և զրո աստի-

---

[1] Տե՛ս **Савченко А. Н.,** նշվ. աշխ., էջ 156-157, 160-162, նաև՝ **Burrow T.**, The Sanskrit Language, London, 1955, p. 219, 302:

[2] Տե՛ս **Sihler A. L.,** New Comparative Grammar of Greek and Latin, New York/Oxford, 1995, p. 305, **Szemerényi O.**, նշվ. աշխ., էջ 174:

[3] Տե՛ս **Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, с. 313-317, **Burrow T.,** նշվ. աշխ., էջ 222-223, 244, հմմտ. նաև՝ **Красухин К. Г.**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, с. 142-144:

[4] Տե՛ս **Мейе А.**, նշվ. աշխ., էջ 312, նաև՝ **Brugmann K.**, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Vol. 1, Cambridge University Press, 2009, S. 251:

ճանների հերթագայության հարցում շեշտից բացի այլ գործոններ են նշվում: Այսպես, թեև Կ. Բրուգմանը ընդունում է, որ հ.-ե նախալեզվում չեզոք սեռի *-es-/-os- ածանցով վերացական անունները թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերում ունեցել են կայուն արմատական շեշտ և հիմքի լիաձայն աստիճանի ձայնավորում, այդուհանդերձ գտնում է, որ նախալեզվի ավելի վաղ շրջանում թույլ ձևերում շեշտն անցնում էր վերջավորության վրա, իսկ հիմքը սկզբնապես ենթարկվում էր o/e/ø(զրո) ձայնդարձի՝ եզ. ուղղ.-հայց. CéC-os-ø, եզ. սեռ. CC-s-és/ós, եզ. ներգ. CC-és(-i) (որտեղ C = որևէ բաղաձայն) բանաձևի համաձայն[1]: Ֆ. դը Սոսյուրը և Ե. Կուրիլովիչը նույնպես *-os-/-es- հերթագայության փոխարեն սկզբնական *-os/-es/-s հերթագայություն են վերականգնում, իսկ թույլ ձևերում ձայնդարձի օրինաչափ զրո աստիճանի հետագա փոխարինումը լիաձայն աստիճանի e ձայնավորով բացատրվում է մասամբ բաղաձայնային կուտակումից խուսափելու ձգտումով, մասամբ էլ *ձայնավոր + բաղաձայն* կապակցության հանգող արմատական հիմքերի հոգնակի թվի թույլ ձևերի համաբանական ազդեցությամբ (հմմտ. հ.-ե. *pod-/*ped- «ոտք» բառի հոգ. գործ. *ped-bhís, հոգ. գործ. *ped-sú և դրանց հետևողությամբ՝ եզ. տր. *ped-éi (<< *pd-éi) և այլ հոլովաձևերը)[2]: Բացի այդ, Ֆ. դը Սոսյուրը գտնում է, որ լիաձայն աստիճանի ձայնավորի սղումը ոչ միշտ է պայմանավորված շեշտի ազդեցությամբ. նա ըստ այդմ տարբերակում է ուժեղ թեքում և թույլ թեքում. ուժեղ թեքման դեպքում լիաձայն աստիճանի ձայնավորը շեշտի տեղաշարժի հետևանքով սղվում է շեշտանախորդ վանկում (հմմտ. հ. հնդ. եզ. հայց. pitár-am «հայր», եզ. տր. pitr-é), իսկ թույլ թեքման դեպքում ձայնավորը սղվում է բաղաձայնով սկսվող վերջավորությունից առաջ՝ անկախ շեշտի դիրքից (հմմտ. հ. հնդ. հոգ. գործ. pitr̥-bhis «հայրերով, հայրերի հետ միասին»): Ըստ Ֆ. դը Սոսյուրի՝ թույլ թեքումը եզակի թվում բնորոշ է եղել հիմնականում *i*-ահանգ և *u*-ահանգ հիմքերին, իսկ հոգնակի թվում՝ գրեթե բոլոր անբուն հիմքերին[3]: Ա. Մեյեն, ըստ էության, ընդունում է թույլ թեքման սոսյուրյան մեկնաբանությունը[4], բայց ուժեղ թեքում և թույլ թեքում չի տարբերակում: Պատճառը միանգամայն պարզ է. նա գտնում է, որ էապես սխալ կլիներ ձայնդարձը կապել շեշտի տեղաշարժի հետ[5] (սակայն առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հ.-ե. ձայնդարձի զրո աստիճանի ծա-

---

[1] Տե՛ս **Brugmann K.**, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Vol. 2, Part 1, Cambridge University Press, 2009, S. 386-388:

[2] Տե՛ս **Saussure F. de**, Mémoire sur le système primitif des voyelles dans les langues indo-européennes, Cambridge University Press, 2009, p. 201-202, 214-215, **Kuryłowicz J.**, L'Apophonie en indo-européen, Wrocław, 1956, p. 67-68, 110-112:

[3] Տե՛ս **Saussure F. de,** նշվ. աշխ., էջ 187, 194-210:

[4] Տե՛ս **Meйe A.** , նշվ. աշխ., էջ 312-313:

[5] Տե՛ս apud **Pedersen H.**, La cinquième déclinaison latine, København, 1926 (Det Kgl. Danske Videnskabernes Selskab. Historisk-filologiske Meddelelser, XI, 5), p. 24:

գումը բացատրվում է շեշտի ազդեցությամբ)[1]: Այդ առումով հատկանշական է, որ թեև Ա. Մեյեն -tei-/-ti- ածանցով հիմքերի հոլովական հարացույցի համար սկզբնական շարժական շեշտ է ենթադրում (օրինակ՝ հ. հնդ. եզ. հայց. má-ti-m «միտք» < հ.-ե. *mṓ-ti-m, եզ. սեռ. ma-té-s < հ.-ե. *mn̥-téi-s), այդուհանդերձ շեշտի տեղաշարժին համապատասխան արմատական ձայնավորի լիաձայն և զրո աստիճանների հերթագայություն չի վերականգնում[2]: Անշուշտ, դա նաև պայմանավորված է ավանդական հնդեվրոպաբանության այն դրույթով, որի համաձայն՝ ածանցավոր հիմքերի հիմքակազմ ածանցին նախորդող մասը մնում է անփոփոխ ամբողջ հարացույցում[3]:

Սակայն Հ. Պեդերսենը վերանայում է այդ ավանդական տեսակետը: Նա նկատում է, որ, մի կողմից, եզ. ուղղ. հուն. patḗr, հ. հնդ. pitā́ «հայր», եզ. հայց. հուն. patér-a, հ. հնդ. pitár-am, հուն. եզ. սեռ. patr-ós, հ. հնդ. եզ. տր. pitr-é, մյուս կողմից՝ հ. հնդ. եզ. ուղղ. sūnú-s «որդի», agní-s «կրակ», հ. հնդ. եզ. սեռ. sūnó-s, agné-s, եզ. տր. sūnáv-e, agnáy-e հոլովաձևերի պարագայում ուժեղ և թույլ ձևերը միմյանց հակադրվում են տարբեր սկզբունքով. առաջին դեպքում շեշտի տեղաշարժը և դրան համապատասխան ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայությունը սկզբնապես գործել է հիմքակազմ ածանցի և վերջավորության, իսկ երկրորդ դեպքում՝ արմատի և հիմքակազմ ածանցի միջև: Ըստ այդմ՝ երկու հարացույցների շեշտաձայնդարձային հերթագայությունները կարելի է արտահայտել հետևյալ բանաձևերի միջոցով[4].

I- տիպ՝ ուժեղ ձևեր R(ø) + S(é) + D(ø), թույլ ձևեր R(ø) + S(ø) + D(é)

II- տիպ՝ ուժեղ ձևեր R(é) + S(ø) + D(ø), թույլ ձևեր R(ø) + S(é) + D(ø)

Նա, հուն. δύναμις (dynamis) բառը կիրառելով «ուժեղ ձայնավորային աստիճան» (‘‘degré vocalique fort’’) իմաստով, հոլովական առաջին տիպը կոչում է հիստերոդինամիկ (‘‘flexion hystérodyname’’, hystero- = «ավելի դեպի վերջը»), իսկ երկրորդ տիպը՝ պրոտերոդինամիկ (‘‘flexion protérodyname’’, protero- = «ավելի դեպի առաջ»): Հ. Պեդերսենը միևնույն ժամանակ նշում է, որ շեշտի և ձայնդարձի սկզբնական փոխհարաբերությունը մեծապես մթագնել է զանազան համաբանական գործընթացների և նորագոյացությունների հետևանքով մասամբ դեռևս հնդեվրոպական նախալեզվում, մասամբ էլ ցեղակից առանձին լեզուներում: Ուստի, ասենք, հ. հնդ. եզ. ուղղ. matí-s

---

[1] Տե՛ս **Brugmann K.**, Grundriss..., Vol. 1, S. 249, **Saussure F. de,** նշվ. աշխ., էջ 187, 194-201, **Pedersen H.**, նշվ. աշխ., էջ 23-24, **Kuryłowicz J.**, նշվ. աշխ., էջ 97 և հջ., **Szemerényi O.**, նշվ. աշխ., էջ 111-112, **Meier-Brügger M.,** նշվ. աշխ., էջ 282, **Beekes R. S. P.**, Comparative Indo-European Linguistics. An Introduction, Second edition, revised and corrected by M. de Vaan, Amsterdam/Philadelphia, 2011, p. 176-177:

[2] Տե՛ս **Meйe A.**, նշվ. աշխ., էջ 324, 284:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 200:

[4] Այստեղ և հետագա շարադրանքում՝ R — արմատ, S — հիմքակազմ ածանց, D — վերջավորություն, é — շեշտակիր լիաձայն աստիճան, ø — շեշտազուրկ զրո աստիճան:

«միտք», եզ. սեռ. maté-s և եզ. ուղղ. sūnú-s «որդի», եզ. սեռ. sūnó-s ձևերի հնդեվրոպական նախաձևերը նա վերականգնում է հետևյալ կերպ՝ եզ. ուղղ. *ménti-s «միտք», եզ. սեռ. *mn̥téi-s և եզ. ուղղ. *séunu-s «որդի», եզ. սեռ. *sunéu-s[1]: Ֆ. Բ. Յ. Կուիպերը հետևողականորեն զարգացնում է Հ. Պեդերսենի առաջ քաշած հիստերոդինամիկ և պրոտերոդինամիկ հոլովական տիպերի գաղափարը և այդ տեսանկյունից դիտարկում հին հնդկերենի ու ցեղակից այլ լեզուների ընձեռած փաստական նյութը[2]:

1964 թ. հնդեվրոպական շեշտաձայնդարձային մի նոր հարացույց է բացահայտում Յ. Նարթենը: Դեռևս Ա. Մեյեն գտնում էր, որ հ. հնդ. ներկա եզ. III դ. tā́ṣ-ṭi «կառուցում է», հոգ. III դ. tákṣ-ati (-ati < *-n̥ti), լատ. ներկա եզ. III դ. ēs-t «ուտում է», հոգ. III դ. ed-unt և նման ձևերում պահպանվել են սկզբնական ē/e հերթագայության հետքերը, իսկ ընդհանուր առմամբ ցեղակից լեզուները հարացույցում ընդհանրացրել են ձայնդարձի կա՛մ երկար, կա՛մ լիաձայն աստիճանի հիմքային ձևը[3]: Բայց Ա. Մեյեն չի զարգացնում իր այդ գաղափարը և չի անդրադառնում այն դեպքերին, երբ ուժեղ ձևերի ձայնդարձի երկար աստիճանը թույլ ձևերում հերթագայվում է ոչ թե լիաձայն, այլ զրո աստիճանի ձևի հետ. հմմտ. հ. հնդ. ներկա եզ. III դ. stáu-ti (<*stḗu-ti) «գովում է», հոգ. III դ. stuv-ánti և այլն: Ավանդական հնդեվրոպաբանության շրջանի այլ հետազոտողներ խոնարհման հարացույցի ուժեղ և թույլ ձևերի ē/e հերթագայությունը սովորաբար մեկնաբանում են որպես հետագա նորագոյացություն, որը փոխարինել է սկզբնական e/ø հերթագայությանը[4]: Բայց Յ. Նարթենն անառարկելիորեն ապացուցում է, որ ē/e հերթագայությունը հ.-ե. շեշտաձայնդարձային հնագույն օրինաչափություն է ներկայացնում. ձայնդարձի ē երկար աստիճանը հանդես է եկել կայուն արմատական շեշտով բնութագրվող բայահիմքի ուժեղ ձևերում, իսկ e լիաձայն աստիճանը՝ թույլ ձևերում: Իհարկե, հնդեվրոպական ուշ շրջանից սկսած՝ այդ տիպի արմատական բայահիմքերը թույլ ձևերի լիաձայն աստիճանը զրո աստիճանով փոխարինելու միտում են ցուցաբերել՝ թույլ ձևերում շեշտը տեղափոխելով վերջավորության վրա: Դրա հետևանքով առաջացել է ձայնդարձի մի նոր տիպ՝ ē/ø. հմմտ. հ. հնդ. ներկա եզ. III դ. stáu-ti (<*stḗu-ti) «գովում է», հոգ. III դ. stuv-ánti (փոխ.՝ հ. հնդ. *stáv-ati <*stéu̯-n̥ti): Հաճախ էլ սկզբնական ē/e հեր-

---

[1] Տե՛ս **Pedersen H.**, նշվ. աշխ., էջ 23-25, նաև՝ **Pedersen H.**, Études lituaniennes, Copenhague, 1933 (Det Kgl. Danske Videnskabernes Selskab. Historisk-filologiske Meddelelser, XIX, 3), p. 21 et suiv.:

[2] Տե՛ս **Kuiper F. B. J.,** Notes on Vedic Noun-Inflexion, Amsterdam, 1942, p. 1-5, 9-18, 29-70:

[3] Տե՛ս **Meйe A.**, նշվ. աշխ., էջ 252:

[4] Տե՛ս **Kuryłowicz J.**, նշվ. աշխ., էջ 305-308, 155-156, **Watkins C.**, Indogermanische Grammatik, Bd. III, Teil 1: Geschichte der indogermanischen Verbalflexion, Heidelberg, 1969, S. 27-32, հմմտ. նաև՝ **Hirt H.**, Indogermanische Grammatik, Bd. II: Der Indogermanische Vokalismus, Heidelberg, 1921, S. 41-42:

թագայությունը վերացել է ձայնդարձի երկար կամ լիաձայն աստիճանի ընդհանրացման հետևանքով[1]: Արդի հնդեվրոպաբանության մեջ ḗ/ḗ հերթագայությունը, որն ուժեղ և թույլ ձևերում ուղեկցվում է կայուն արմատական շեշտով, ի պատիվ Յ. Նարթենի կոչվում է նարթենյան ձայնդարձ: Ի դեպ, նարթենյան ձայնդարձ է վերականգնվում հ.-ե. նաև որոշ ածանցավոր բայահիմքերի (այդ թվում՝ սիգմատիկ առիստի), այլև մի խումբ անվանական հիմքերի համար[2]: Ինչպես իրավացիորեն նկատում է Ջ. Ջեյսընոֆը, նարթենյան ձայնդարձի բացահայտմամբ ոչ միայն հնդեվրոպական շեշտաձայնդարձային մի նոր հարացույց վերականգնվեց, այլև պարզ դարձավ, որ ավանդական e/ø հերթագայության պարագայում հարացույցի ուժեղ ձևերում հանդես եկող e լիաձայն աստիճանը շեշտաձայնդարձային մեկ այլ հարացույցում գործառել է որպես թույլ ձևերի արմատական ձայնավորում[3]:

1960-1970-ական թթ. սկսած՝ ավստրիացի և գերմանացի մի խումբ լեզվաբաններ (այդ թվում՝ Յ. Շինդլերը, Հ. Այխները, Հ. Ռիքսը, Գ. Կլինգենշմիդտը) ինտենսիվ ուսումնասիրություններ են կատարում հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների ամբողջական համակարգի վերականգնման և մի միասնական տեսություն ստեղծելու ուղղությամբ, որի համար կարևոր ազդակ է ծառայում 1964 թ. Էդինբուրգում կայացած գիտական քննարկումը[4]: Հ. Այխները շեշտի կայուն կամ շարժական բնույթի հիման վրա տարբերակում է շեշտաձայնդարձային հարացույցների երկու հիմնական տիպ՝ ստատիկ և կինետիկ՝ համապատասխան ենթատիպերով՝ ակրոստատիկ (արմատի կայուն շեշտով), մեսոստատիկ (ածանցի կայուն շեշտով), տելեստոստատիկ (վերջավորության կայուն շեշտով) և հոլոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի, ածանցի և վերջավորության միջև), պրոտերոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի և ածանցի միջև), հիստերոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է ածանցի և վերջավորության միջև), ամֆիկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի և վերջավորության միջև)[5]: Յ. Շինդլերը Հ. Այխների մշակած տերմինաբանության հետևողությամբ հ.-ե. անվանական

---

[1] Տե՛ս **Narten J.**, Zum "proterodynamischen" Wurzelpräsens // Pratidānam: Indian, Iranian and Indo-European Studies, ed. by J. C. Heesterman, G. H. Schokker and V. I. Subramoniam, The Hague: Mouton, 1968, p. 9-19, նաև՝ Lexikon der Indogermanischen Verben. Die Wurzeln und ihre Primärstammbildungen, unter Leitung von H. Rix, 2. Auflage, Wiesbaden, 2001, S. 14, 230, 600, 638-639:

[2] Տե՛ս **Schindler J.**, Alte und neue Fragen zum indogermanischen Nomen. // In honorem Holger Pedersen. Kolloquium der Indogermanischen Gesellschaft, hrsg. von Jens E. Rasmussen, Wiesbaden, 1994, S. 398-399, Lexikon der Indogermanischen Verben..., S. 14(1b), 20-21(2b), **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 50-51:

[3] Տե՛ս **Jasanoff J. H.**, Hittite and the Indo-European Verb, Oxford University Press, 2003, p. 68:

[4] Տե՛ս **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 338-339:

[5] Տե՛ս **Eichner H.**, Die Etymologie von heth. "mehur" // Münchener Studien zur Sprachwissenschaft, 1973, 31, S. 91 Anm. 33:

անբուն հիմքերի համար վերականգնում է շեշտաձայնդարձային հարացույցների չորս հիմնական տիպ՝ ակրոստատիկ (երկու ենթատիպով), պրոտերոկինետիկ, հիստերոկինետիկ և հոլոկինետիկ: Պրոտերոկինետիկ, հիստերոկինետիկ և հոլոկինետիկ հարացույցները, որոնք ենթադրում են բառի եռաբաղադրիչ կառուցվածք (արմատի, հիմքակազմ ածանցի և վերջավորության առկայություն), բնականաբար բնորոշ են միայն ածանցավոր հիմքերին, մինչդեռ ակրոստատիկ հարացույց կարող են ունենալ թե՛ արմատական, թե՛ ածանցավոր հիմքերը[1]: Նշենք, որ շեշտաձայնդարձային հարացույցների շինդլերյան համակարգը (այն երբեմն կոչվում է նաև էռլանգենյան համակարգ) լայնորեն ընդունված է արդի հնդեվրոպաբանության մեջ և հանդես է գալիս հնդեվրոպական լեզվաբանության գրեթե բոլոր նորագույն դասագրքերում[2], բայց տերմինաբանության հարցում դեռևս որոշ անմիօրինակություն է նկատվում. պրոտերոկինետիկ, հիստերոկինետիկ և հոլոկինետիկ հարացույցների համար համապատասխանաբար գործածվում են նաև պրոտերոդինամիկ, հիստերոդինամիկ և հոլոդինամիկ (վերջինիս պարագայում՝ նաև ամֆիկինետիկ և ամֆիդինամիկ, բայց տե՛ս ստորև) անվանումները, իսկ ակրոստատիկ տիպը կոչվում է նաև ակրոդինամիկ: Ընդ որում, եթե *–ստատիկ* և *-կինետիկ* անվանումների դեպքում սովորաբար նկատի են առնվում շեշտի դիրքը և դրա կայուն կամ շարժական բնույթը, ապա *–դինամիկ* անվանման տակ ոմանք նկատի ունեն դարձյալ շեշտի, իսկ ուրիշները՝ լիաձայն աստիճանի ձայնավորի դիրքը հարացույցային ձևերում: Սակայն նշված տարբերությունը ի վերջո էական չէ, քանի որ շեշտային օրինաչափությունը համընդհանուր կերպով դիտվում է առաջնային, իսկ ձայնավորային հերթագայությունը՝ որպես նրա անմիջական հետևանք (*շեշտակիր վանկ = ձայնդարձի e աստիճան, շեշտազուրկ վանկ = ø(զրո) կամ o աստիճան* երբեմնի ընդհանուր սկզբունքի համաձայն)[3]:

Հիշյալ հարացույցային տիպերը սովորաբար բնութագրվում են եզակի ուղղական, հայցական, սեռական և ներգոյական հոլովաձևերի շեշտաձայնդարձային օրինաչափությունների հիման վրա: Ի դեպ, եզակի ներգոյականն իր շեշտաձայնդարձային առանձնահատկություններով հաճախ տարբերվում է թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերից. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *u̯ód-r̥ «ջուր»,

---

[1] Տե՛ս **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme…, S. 262-264, նաև՝ **Schindler J.**, L'Apophonie des thèmes indo-européens en -r/n // Bulletin de la Société de Linguistique de Paris, 1975, 70, p. 4-5, **Schindler J.**, L'Apophonie des noms-racines indo-européens // Bulletin de la Société de Linguistique de Paris, 1972, 67, p. 32 et suiv.:

[2] Տե՛ս **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 107-110, Clackson **J.** , նշվ. աշխ., էջ 80 և հջ., **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 349-352, նաև՝ **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 50-54, **Николаев А. С.**, Исследования по праиндоевропейской именной морфологии, СПб., 2010, с. 293 и след.:

[3] Տե՛ս **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 340 և հջ., **Rix H.**, Historische Grammatik des Griechischen: Laut- und Formenlehre, 2. Auflage, Darmstadt, 1992, S. 122-124, **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 107-109, **Clackson J.**, նշվ. աշխ., էջ 80 և հջ.:

եզ. սեռ. *u̯éd-n̥-s, եզ. ներգ. ud-én; եզ. ուղղ. *dʰégʰ-ōm «գետին, հող», եզ. հայց. *dʰégʰ-om-m̥, եզ. սեռ. *dʰǵʰ-m-és, եզ. ներգ. *dʰǵʰ-ém և այլն[1]: Արդ, հ.-ե. շեշտա-ձայնդարձային հարացույցները նկարագրվում են հետևյալ կերպ.

ակրոստատիկ I՝ ուժեղ ձևեր R(ó) + S(ø) + D(ø)
թույլ ձևեր R(é) + S(ø) + D(ø)
եզ. ներգ. R(ø) + S(é/ḗ) + D(ø)[-i]

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *ǵón-u «ծունկ», եզ. սեռ. *ǵén-u-s, եզ. ներգ. *ǵn-ḗu̯/*ǵn-éu̯-i; եզ. ուղղ. *nókʷ-t-s «գիշեր», եզ. հայց. *nókʷ-t-m̥, եզ. սեռ. *nékʷ-t-s և այլն,

ակրոստատիկ II՝ ուժեղ ձևեր R(ḗ) + S(ø) + D(ø)
թույլ ձևեր R(é կամ ó) + S(ø) + D(ø)[2]

հմմտ. մի կողմից՝ հ.-ե. ուժեղ ձևերի հիմք *ǵḗrh₂-s- «ծեր տարիք», թույլ ձևերի հիմք *ǵérh₂-s-, մյուս կողմից՝ ուժեղ ձևերի հիմք *h₁ḗgʷ-i- «օձ», թույլ ձևերի հիմք *h₁ógʷ-i- և այլն,

պրոտերոկինետիկ՝ ուժեղ ձևեր R(é) + S(ø) + D(ø)
թույլ ձևեր R(ø) + S(é) + D(ø)
եզ. ներգ. R(ø) + S(ḗ) + D(ø)

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *h₁néh₃-mn̥ «անուն», եզ. սեռ. *h₁n̥h₃-mén-s; եզ. ուղղ.-հայց. *péh₂-u̯r̥ «կրակ», եզ. սեռ. *ph₂-u̯én-s; եզ. ուղղ. *pér-tu-s «ծանծաղուտ, անցահուն», եզ. հայց. *pér-tu-m, թույլ ձևերի հիմքը՝ *pr-téu̯-, եզ. ներգ. *pr-tḗu̯ և այլն,

հիստերոկինետիկ՝ ուժեղ ձևեր R(ø) + S(é) + D(ø)
թույլ ձևեր R(ø) + S(ø) + D(é)
եզ. ներգ. R(ø) + S(é) + D(ø)[-i]

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *ph₂-tḗr (< *ph₂-tér-s) «հայր», եզ. հայց. *ph₂-tér-m̥, եզ. սեռ. *ph₂-tr-és, եզ. ներգ. *ph₂-tér-i; եզ. ուղղ. *h₂ukʷs-ḗn, եզ. հայց. *h₂ukʷs-én-m̥, եզ. սեռ. *h₂ukʷs-n-és և այլն,

հոլոկինետիկ՝ ուժեղ ձևեր R(é) + S(o) + D(ø)
թույլ ձևեր R(ø) + S(ø) + D(é)
եզ. ներգ. R(ø) + S(é) + D(ø)[-i]

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *dʰégʰ-ōm (< *dʰégʰ-om-s) «գետին, հող», եզ. հայց. *dʰégʰ-om-m̥ > *dʰégʰ-ōm, եզ. սեռ. *dʰǵʰ-m-és, եզ. ներգ. *dʰǵʰ-ém; եզ. ուղղ. *h₂éu̯s-ōs «այգաբաց», եզ. հայց. *h₂éu̯s-os-m̥, եզ. սեռ. *h₂us-s-és, եզ. ներգ. *h₂us-és(-i);

---

[1] Տե՛ս **Schindler J.**, Alte und neue Fragen..., S. 397, **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme…, S. 262-263, նաև՝ **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 349-352:

[2] Հմմտ. **Schindler J.**, Alte und neue Fragen..., S. 398-399, **Nussbaum A.,** Two Studies in Greek and Homeric Linguistics, Göttingen, 1998 (Hypomnemata, Heft 120), p. 150, note 179, **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 50-51, 63, **Герценберг Л. Г. ,** Краткое введение в индоевропеистику, СПб., 2010, с. 43-44:

եզ. ուղղ. *h₂ék̑-mōn «քար, ապառաժ», եզ. հայց. *h₂ék̑-mon-m̥, եզ. սեռ. *h₂k̑-(m)n-és և այլն:

Ծան. *Ինչպես հայտնի է, ավանդական հնդեվրոպաբանության մեջ շնչավոր սեռի *-n- և *-r- ձայնորդահանգ հիմքերի դեպքում ձայնդարձային երկու տիպ էր տարբերակվում՝* ***ա)*** *եզ. հայց. *-on-m̥, եզ. ներգ. *-en-i, հոգ. ուղղ. *-on-es և եզ. հայց. *-or-m̥, եզ. ներգ. *-er-i, հոգ. ուղղ. *-or-es,* ***բ)*** *եզ. հայց. *-en-m̥, եզ. ներգ. *-en-i, հոգ. ուղղ. *-en-es և եզ. հայց. *-er-m̥, եզ. ներգ. *-er-i, հոգ. ուղղ. *-er-es. հմմտ. մի կողմից՝ հ. հայ. եզ. ուղղ.-հայց.* ***մատ-ն*** *(-ն < *-ուն < *-ŏn-), եզ. ներգ.* ***(ի) մատ-ին*** *(*-ին < *-en-i), հոգ. ուղղ.* ***մատ-ուն-ք*** *(-ուն-ք < *-on-es), մյուս կողմից՝ հ. հայ. եզ. ուղղ.-հայց.* ***գառ-ն*** *(-ն < *-ին < *-ĕn-), եզ. ներգ.* ***(ի) գառ-ին*** *(*-ին < *-en-i), հոգ. ուղղ.* ***գառ-ին-ք*** *(-ին-ք < *-en-es): Արդ, հոլովական երկու տիպերի հիմնական տարբերությունը համարվում էր հիմքակազմ ածանցում e/o հերթագայության առկայությունը կամ բացակայությունը[1]: Մինչդեռ ըստ արդի հնդեվրոպաբանության՝ հիշյալ հոլովական տիպերը միմյանցից տարբերվում են ոչ միայն ածանցի, այլև արմատի ձայնդարձային օրինաչափությամբ և շեշտի տեղաշարժի բնույթով. եզ. հայց. *R(é)-on-m̥, եզ. ներգ. *R(ø)-én-i, հոգ. ուղղ. *R(é)-on-es և եզ. հայց. *R(é)-or-m̥, եզ. ներգ. * R(ø)-ér-i, հոգ. ուղղ. *R(é)-or-es հոլովական տիպը բնորոշ է հոլոկինետիկ հիմքերին, իսկ եզ. հայց. *R(ø)-én-m̥, եզ. ներգ. *R(ø)-én-i, հոգ. ուղղ. *R(ø)-én-es և եզ. հայց. *R(ø)-ér-m̥, եզ. ներգ. *R(ø)-ér-i, հոգ. ուղղ. *R(ø)-ér-es տիպը՝ հիստերոկինետիկ հիմքերին[2]:*

Ինչ վերաբերում է արմատական (այն է՝ ածանցազուրկ) հիմքերին, արդի հնդեվրոպաբանության մեջ Յ. Շինդլերից սկսած տարբերակում են շեշտաձայնդարձային հարացույցների երկու հիմնական տիպ: Դրանցից առաջինին բնորոշ է ակրոստատիկ հարացույց՝ ուժեղ ձևեր R(ó) + D(ø), թույլ ձևեր R(é) + D(ø), եզ. ներգ. R(é/ḗ) + D(ø)[-i] բանաձևի համաձայն. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *dóm-s (> *dṓm) «տուն», եզ. հայց. *dóm-m̥ > *dṓm, եզ. սեռ. *dém-s, եզ. ներգ. *dém-i/*dḗm, հ.-ե. եզ. ուղղ. *gʷóu̯-s «խոշոր եղջերավոր անասուն, ցուլ, կով», եզ. հայց. *gʷóu̯-m̥ > *gʷṓm, եզ. սեռ. *gʷéu̯-s և այլն: Իսկ երկրորդ հարացույցը բնութագրվում է շարժական շեշտով և ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայությամբ. բնականաբար, ածանցի բացակայության պարագայում շեշտաձայնդարձային հերթագայությունը տեղի է ունենում արմատի և վերջավորության միջև՝ ուժեղ ձևեր R(é) + D(ø), թույլ ձևեր R(ø) +

---

[1] Տե՛ս **Meйe A.**, նշվ. աշխ., էջ 310-311:

[2] Տե՛ս **Harðarson J. A.**, Der geschlechtige Nom. Sg. und der neutrale Nom.-Akk. Pl. der n-Stämme im Urindogermanischen und Germanischen. // Sprachkontakt und Sprachwandel, Akten der XI Fachtagung der Indogermanischen Gesellschaft, hrsg. von G. Meiser und O. Hackstein, Wiesbaden, 2005, S. 217, 220-221 und Anm. 38:

D(é), եզ. ներգ. R(é) + D(ø). հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *d(i)i̯éu̯-s «երկինք, երկնային աստվածություն, ցերեկային լույս», եզ. հայց. *d(i)i̯éu̯-m̥ > *d(i)i̯ḗ-m̥, եզ. սեռ. *diu̯-és, եզ. ներգ. *di̯éu̯-i; հ.-ե. եզ. ուղղ. *h₂nḗr (< *h₂nér-s) «մարդ, այր», եզ. հայց. *h₂nér-m̥, եզ. սեռ. *h₂n̥r-és և այլն[1]: Ինչպես տեսանք, այդպիսի հերթագայությամբ բնութագրվող հարացույցը Հ. Այխները կոչում էր ամֆիկինետիկ: Հետևաբար ճիշտ չէ ամֆիկինետիկ (ամֆիդինամիկ) անվանումը կիրառել հոլոկինետիկ (հոլոդինամիկ) իմաստով, քանի որ դրանք երկու տարբեր հարացույցներ են ներկայացնում. ամֆիկինետիկ հարացույցը սովորաբար հանդիպում է արմատական, իսկ հոլոկինետիկ հարացույցը՝ ածանցավոր հիմքերի դեպքում. ամֆիկինետիկ հարացույցում շեշտաձայնդարձային հերթագայությունը տեղի է ունենում արմատի և վերջավորության, իսկ հոլոկինետիկ հարացույցում՝ արմատի, ածանցի և վերջավորության միջև[2]:

Բայական հիմքերի դեպքում հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցներից հանդիպում են միայն ակրոստատիկ և ամֆիկինետիկ տիպերը. հմմտ. ակրոստատիկ II՝ հ.-ե. ներկա եզ. III դ. *stḗu-ti «գովում է», հոգ. III դ. *stéu̯-n̥ti, ամֆիկինետիկ՝ հ.-ե. ներկա եզ. III դ. *g^{wh}én-ti «հարվածում է, սպանում է», հոգ. III դ. g^{wh}n-énti և այլն[3]:

Հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունները ցեղակից լեզուներում համեմատաբար լավ պահպանվել են հիստերոկինետիկ և ամֆիկինետիկ հարացույցների դեպքում, իսկ ակրոստատիկ, պրոտերոկինետիկ և հոլոկինետիկ հարացույցների սկզբնական դրությունը մեծ մասամբ մթագնել է հետագա համաբանական փոփոխությունների հետևանքով: Այսպես, հնդեվրոպական միասնության ուշ շրջանից սկսած՝ ակրոստատիկ արմատական հիմքերը ամֆիկինետիկ տիպին, իսկ ածանցավոր հիմքերը հոլոկինետիկ տիպին անցնելու միտում են ցուցաբերել՝ թույլ ձևերում շեշտը տեղափոխելով վերջավորության վրա և, ըստ այդմ, եզ. սեռ. զրո աստիճանի –s վերջավորությունը փոխարինելով լիաձայն աստիճանի -és-ով: Իսկ արմատի լիաձայն աստիճանը փոխարինվել է զրո աստիճանով, եթե ակրոստատիկ հիմքի արմատն ունեցել է -éR- կամ -éRT- կառուցվածք (R = ձայնորդ, T = պայթական բաղաձայն), մինչդեռ -éT- կամ -RéT- կառուցվածքի դեպքում արմատը պահպանվել է լիաձայն աստիճանի ձևով. օրինակ՝ հ.-ե. եզ. հայց.

---

[1] Տե՛ս **Schindler J.**, L'Apophonie des noms-racines…, p. 31-38, նաև՝ **Schindler J.**, Bemerkungen zur Herkunft der idg. Diphthongstämme und zu der Eigentümlichkeiten ihrer Kasusformen. // Die Sprache, 1973, 19, S. 157, **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch des Altindoarischen, Bd. I, Heidelberg, 1992, S. 478-480, 697, 750-752, Bd. II, Heidelberg, 1996, S. 19-20, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 346-348:

[2] Տե՛ս նաև **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 351-352:

[3] Տե՛ս Lexikon der Indogermanischen Verben..., S. 14, 218, 600, **Герценберг Л. Г.**, նշվ. աշխ., էջ 44, 46, 48: Որոշ հետազոտողներ վերականգնում են հ.-ե. նաև ակրոստատիկ I տիպի (ó/é հերթագայությամբ) բայական հարացույց (տե՛ս **Jasanoff J. H.**, նշվ. աշխ. էջ 64-72):

*dóm-m̥ > *dṓm «տուն» (հմմտ. հայ. *տուն*, հուն. dõ «տուն»), հ.-ե. եզ. սեռ. *dém-s (հմմտ. *dém-s pótis «տանտեր» > հ. հնդ. dám-pati-, վաղ ավ. dəm̥g patōiš, հուն. despótēs «տեր») >> *dm̥-és (հմմտ. հայ. եզ. սեռ. *տան*)[1]; հ.-ե. եզ. հայց. *pód-m̥ «ոտք» (հմմտ. հուն. եզ. հայց. pód-a, հ. հնդ. pā́d-am «ոտք», հ. հայ. եզ. ուղղ.-հայց. *ոտն*), հ.-ե. եզ. սեռ. *péd-s >> *ped-és (հմմտ. հ. հնդ. եզ. սեռ. pad-ás, լատ. ped-is «ոտքի»): Որոշ ակրոստատիկ հիմքեր էլ դարձել են պրոտերոկինետիկ. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *dór-u «ծառ, փայտ» (հմմտ. հ. հնդ. dā́ru, ուշ ավ. dāᵘru, հուն. dóru, խեթ. tāru «փայտ»), հ.-ե. եզ. սեռ. *dér-u-s >> *dr-éu̯-s (հմմտ. հ. հնդ. եզ. սեռ. dróṣ, ուշ ավ. draoš «փայտի») և այլն[2]: Իսկ պրոտերոկինետիկ և հոլոկինետիկ հարացույցներում ձայնդարձը համեմատաբար լավ պահպանվել է ածանցի և վերջավորության պարագայում (իհարկե, ածանցի լիաձայն աստիճանի ընդհանրացման մասնակի միտումով), մինչդեռ արմատական ձայնավորի հերթագայությունը մեծ մասամբ վերացել է լիաձայն աստիճանի կամ զրո աստիճանի ընդհանրացմամբ: Միաժամանակ գործել է շարժական շեշտը արմատի կամ ածանցի կայուն շեշտով փոխարինելու ընդհանուր միտում, որը գրեթե համատարած բնույթ է կրել նախկին պրոտերոկինետիկ հիմքերի դեպքում. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *ménti-s «միտք» >> *mn̥tí-s (թույլ ձևերի շեշտի դիրքի և արմատական զրո աստիճանի ընդհանրացմամբ) > հ. հնդ. matí-s, հ.-ե. եզ. սեռ. *mn̥téi-s > հ. հնդ. maté-s «մտքի»[3], հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *mén-s >> *mén-es (ածանցի լիաձայն աստիճանի ընդհանրացմամբ) > *mén-os «միտք, ոգի» (հմմտ. հուն. ménos, հ. հնդ. mánas «ոգի, խիզախություն, միտք»), հ.-ե. եզ. սեռ. *mn-és-s >> *men-és-os (արմատական լիաձայն աստիճանի ընդհանրացմամբ) >> *mén-es-os (հարացույցում արմատական շեշտի կայունացմամբ) (հմմտ. հուն. եզ. սեռ. méneos, հ. հնդ. mánasas) և այլն[4]: Իսկ որոշ պրոտերոկինետիկ հիմքեր թույլ ձևերում համաբանությամբ նմանվել են հոլոկինետիկ հիմքերին, ըստ այդմ՝ հիմքակազմ ածանցը հանդես է գալիս զրո աստիճանի, իսկ եզակի սեռականի վերջավորությունը՝ լիաձայն աստիճանի ձայնավորումով, թեև շեշտը հաճախ դարձել է կայուն-արմատական. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *$h_1$néh$_3$-m̥ (հմմտ.

---

[1] > նշանը ցույց է տալիս օրինաչափ հնչունական զարգացումները, իսկ >> նշանը՝ ձևաբանական-համաբանական զարգացումները:

[2] Տե՛ս **Schindler J.**, L'Apophonie des noms-racines…, p. 32-36, **Schindler J.**, L'Apophonie des thèmes..., p. 6-7, նաև՝ **Fortson B. W. IV,** նշվ. աշխ., էջ 108-109, **Meier-Brügger M.,** նշվ. աշխ., էջ 350, 343:

[3] Տե՛ս **Pedersen H.**, Études lituaniennes, p. 21 et suiv., **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch…, Bd. II, S. 296, **Meier-Brügger M.,** նշվ. աշխ., էջ 342-343:

[4] Հմմտ. **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme…, S. 264-266, **Clackson J.,** նշվ. աշխ., էջ 82, **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch…, Bd. II, S. 308, **Kloekhorst A.**, Indo-European nominal ablaut patterns: The Anatolian evidence. // Indo-European Accent and Ablaut, ed. by G. Keidana, P. Widmer and Th. Olander, Copenhagen: Museum Tusculanum Press, 2013, p. 120-121:

հ. հնդ. nā́ma, ուշ ավ. nąma, լատ. nōmen «անուն», հայ. *անուն* (< **անումն՝ -ումն > -ուն* անցմամբ), հ.-ե. եզ. սեռ. *h_1n̥h_3-mén-s >> *$h_1$néh$_3$-mn-es/-os > խեթ. lāmnas, հ. հնդ. nā́mnas «անվան» և այլն[1]:

Հնդեվրոպական շեշտաձայնդարձային հարացույցների վերը նկարագրված համակարգից զգալիորեն տարբերվում է Ռ. Բեքեսի առաջարկած տարբերակը, որը հայտնի է որպես շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան համակարգ: Ռ. Բեքեսը արմատական հիմքերի դեպքում տարբերակում է հարացույցային երկու տիպ՝ ստատիկ և հիստերոդինամիկ (կամ պարզապես՝ շարժական 'mobile'). հիստերոդինամիկ կամ շարժական հարացույցը մասամբ համապատասխանում է վերը դիտարկված ամֆիկինետիկ տիպին (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *h_3b^hrḗuH-s «հոնք», եզ. հայց. *h_3b^hréuH-m, եզ. սեռ. *h_3b^hruH-ós), բայց որոշ հիմքերի դեպքում եզակի ուղղականը բնութագրվում է արմատական ṓ ձայնավորով, ի տարբերություն եզակի հայցականի, որը բոլոր դեպքերում ունենում է é ձայնավոր (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *sṓm «մեկ», եզ. հայց. *sém-m, եզ. սեռ. *sm-ós): Իսկ արմատական ստատիկ հիմքերը շեշտաձայնդարձային հերթագայությամբ հիշեցնում են են ակրոստատիկ I տիպը՝ բացառությամբ եզ. հայց. հոլովաձևի, որը թույլ ձևերի հետ միասին պարունակում է արմատի é լիաձայն աստիճան (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *pṓd(s) «ոտք», եզ. հայց. *péd-m, եզ. սեռ. *péd-s)[2]: Աճանցավոր հիմքերի դեպքում վերականգնվում է հարացույցային երեք հիմնական տիպ՝ ստատիկ, պրոտերոդինամիկ և հիստերոդինամիկ: Պրոտերոդինամիկ տիպը համապատասխանում է շինդլերյան համակարգի պրոտերոկինետիկ տիպին: Ստատիկ հարացույցը աճանցավոր հիմքերի դեպքում բնութագրվում է ոչ միայն արմատական կայուն շեշտով, այլև ձայնդարձի բացակայությամբ՝ ուժեղ ձևեր R(é) + S(ø) + D(ø), թույլ ձևեր R(é) + S(ø) + D(ø) բանաձևի համաձայն (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *méh$_2$-tr «մայր», եզ. հայց. *méh$_2$-tr-m, եզ. սեռ. *méh$_2$-tr-s), թեև Ռ. Բեքեսը սկզբունքորեն չի առարկում հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *ǵón-u «ծունկ», եզ. սեռ. *ǵén-u-s տիպի վերականգնման դեմ[3]: Հիստերոդինամիկ տիպը ներառում է չորս ենթատիպ, որոնցից չորրորդը համապատասխանում է շինդլերյան համակարգի հիստերոկինետիկ տիպին, երրորդը՝ հոլոկինետիկ տիպին: Երկրորդ ենթատիպը հոլոկինետիկ տիպից տարբերվում է միայն նրանով, որ եզակի հայցականի հիմքը շեշտաձայնդարձային հերթագայության տեսանկյունից համընկնում է ոչ թե եզակի ուղղականին, այլ եզակի ներգոյականին՝ եզ. ուղղ. CéC-ōC, եզ. հայց. CC-éC-m, եզ. սեռ. CC-C-és/ós, եզ. ներգ. CC-éC, այսինքն՝ եզ. ուղղ. R(é) + S(ō) + D(ø), եզ. հայց. R(ø) +

---

[1] Տե՛ս **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme…, S. 263-264, **Meier-Brügger M.,** նշվ. աշխ., էջ 344:

[2] Տե՛ս **Beekes R. S. P.**, նշվ. աշխ., էջ 208-209:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 190- 191, 208:

S(é) + D(ø), եզ. սեռ. R(ø) + S(ø) + D(é/ó), եզ. ներգ. R(ø) + S(é) + D(ø) բանաձևի համաձայն: Իսկ առաջին ենթատիպը երկրորդ ենթատիպից տարբերվում է եզակի ուղղականում ածանցի զրո աստիճանի ձայնավորմամբ՝ եզ. ուղղ. CéC-C, եզ. հայց. CC-éC-m, եզ. սեռ. CC-C-és/ós, եզ. ներգ. CC-éC: Ինչ վերաբերում է չորս ենթատիպերի պատմական փոխհարաբերությանը, Ռ. Բեքեսը ենթադրում է, որ սկզբնական հարացույցը բնութագրվել է առաջին ենթատիպի շեշտաձայնդարձային հերթագայությամբ, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ ենթատիպերը առաջին ենթատիպի հետագա հնչյունական և համաբանական-ձևաբանական փոփոխությունների արդյունք են[1]: Ա. Կլոքհորստը, հետևողականորեն զարգացնելով Ռ. Բեքեսի այդ գաղափարը, գտնում է, որ շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան և էռլանգենյան (շինդլերյան) համակարգերը իրականում ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց. լեյդենյան համակարգն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի զարգացման համեմատաբար վաղ շրջանը, իսկ էռլանգենյան համակարգը՝ ավելի ուշ շրջանը: Ըստ այդմ՝ վաղ շրջանի համար վերականգնվում է շեշտաձայնդարձային հարացույցների երեք տիպ. 1) ստատիկ՝ եզ. ուղղ. CéC-C, եզ. հայց. CéC-C(-m), եզ. սեռ. CéC-C-s, եզ. ներգ. CéC-C, 2) պրոտերոդինամիկ՝ եզ. ուղղ. CéC-C, եզ. հայց. CéC-C(-m), եզ. սեռ. CC-éC-s, եզ. ներգ. CC-éC, 3) հիստերոդինամիկ՝ եզ. ուղղ. CéC-C, եզ. հայց. CC-éC(-m), եզ. սեռ. CC-C-és, եզ. ներգ. CC-éC: Հետագայում հիստերոդինամիկ հարացույցը որոշ դեպքերում պահպանվել է սկզբնական տեսքով, իսկ ընդհանուր առմամբ համաբանական ձևափոխության է ենթարկվել՝ ծնունդ տալով էռլանգենյան հիստերոկինետիկ և հոլոկինետիկ հարացույցներին[2]:

Հարկ է նշել, որ լեյդենյան համակարգում եզակի ուղղականի և հայցականի հիմքերի շեշտաձայնդարձային անհամապատասխանությունը, որը ենթադրվում է հիստերոդինամիկ (եզ. ուղղ. CéC-C, եզ. հայց. CC-éC(-m)) և որոշ արմատական ստատիկ (եզ. ուղղ. CōC(-s), եզ. հայց. CéC(-m)) հարացույցների պարագայում, հակասում է հնդեվրոպական ձևաբանության ընդհանուր սկզբունքին, որի համաձայն՝ հարացույցի ներսում ուժեղ ձևերը սովորաբար բնութագրվում են հոլովական հիմքի շեշտաձայնդարձային նույն օրինաչափությամբ[3]: Թերևս դա է հիմնական պատճառներից մեկը, որ շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան համակարգը Լեյդենից դուրս լեզվաբանների շրջանում ընդհանուր ճանաչման չի արժանացել:

Արդի հնդեվրոպաբանության մեջ առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների տարբեր տիպերը

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 190-191, 214-215, 176-177, հմմտ. նաև՝ **Kloekhorst A.**, նշվ. աշխ., էջ 115-121 և ծան. 36:

[2] Տե՛ս **Kloekhorst A.**, նշվ. աշխ., էջ 124-126, նաև էջ 121 ծան. 36:

[3] Հմմտ. **Schindler J.**, Die idg. Wörter für “Vogel” und “Ei” // Die Sprache, 1969, 15, S. 155:

ներքին բառակազմության փոխհարաբերության մեջ են գտնվում միմյանց նկատմամբ: Ըստ այդ տեսության՝ հնդեվրոպական նախալեզվում բառը կարող էր շեշտաձայնդարձային մի հարացույցից անցնել մեկ այլ հարացույցի՝ արտահայտելով նոր իմաստ: Եվ քանի որ տվյալ դեպքում արտահայտության պլանում փոխվում է բառի միայն շեշտաձայնդարձային հերթագայության տիպը, ուստի այդ գործընթացն անվանվում է ներքին բառակազմություն (internal derivation)[1]: Ներքին բառակազմության երևույթը չպետք է շփոթել հարացույցի հետագա համաբանական փոփոխության վերը նկարագրված առանձին դեպքերի հետ (հ.-ե. եզ. հայց. *dóm-m̥ > *dṓm «տուն», եզ. սեռ. *dém-s >> *dm̥-és «տան»; հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *dór-u «ծառ, փայտ», եզ. սեռ. *dér-u-s >> *dr-éu̯-s «ծառի, փայտի» և այլն). ներքին բառակազմության դեպքում բառի՝ հարացույցային մի տիպից մեկ այլ տիպին անցումը պայմանավորված է նոր իմաստ արտահայտելու պահանջով և ընդհանուր առմամբ բնութագրվում է երեք հիմնական գործառույթներով՝ 1) անշունչ (չեզոք) սեռի գոյականից կազմվում է հավաքական անուն, 2) գոյականից կազմվում է ածական՝ «տվյալ գոյականի ցույց տված առարկան կամ երևույթն ունեցող, կրող, բերող» նշանակությամբ (հաճախ ածականի հետագա գոյականացման միտումով), 3) անշունչ սեռի գոյականից կազմվում է շնչավոր սեռի անձնավորված գոյական: Իսկ արտահայտության պլանում երկու հիմնական օրինաչափություն է գործում. 1) շեշտաձայնդարձային մի հարացույցից մեկ այլ հարացույցին անցումը տեղի է ունենում որոշակի ենթաստորակարգային հարաբերության սկզբունքով՝ ակրոստատիկ ⇒ պրոտերոկինետիկ, պրոտերոկինետիկ ⇒ հիստերոկինետիկ, հիստերոկինետիկ ⇒ հոլոկինետիկ, 2) անմիջականորեն հոլոկինետիկ հարացույցին կարող են անցնել մնացած բոլոր հարացույցային տիպերին պատկանող բառերը[2]: Ասվածը կարելի է լուսաբանել հետևյալ օրինակներով.

ակրոստատիկ՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *u̯ód-r̥ «ջուր» (հմմտ. խեթ. wadar, հ. վ. գերմ. wazzar «ջուր»), հ.-ե. եզ. սեռ. *u̯éd-n̥-s (հմմտ. խեթ. wedenas «ջրի» < * u̯éd-en-s << *u̯éd-n̥-s) ⇒ **հոլոկինետիկ**՝ հ.-ե. հավաքական հոգ. *u̯éd-ōr (հմմտ. խեթ. հոգ. widār «ջրեր», հուն. húdōr «ջուր»). սկզբնական հավաքական ձևը խեթերենում վերաիմաստավորվել է որպես հոգնակի, իսկ հունարենում՝ որպես եզակի. հունարենում նաև ընդհանրացել է թույլ ձևերի արմատական զրո աստիճանը[3],

---

[1] Տե՛ս **Watkins C.**, Notes on the Plural Formations of the Hittite Neuters. // Investigationes Philologicae et Comparativae. Gedenkschrift für Heinz Kronasser, hrsg. von E. Neu, Wiesbaden, 1982, S. 261, **Nussbaum A.,** նշվ. աշխ., էջ 147 և հջ., **Schaffner S.**, նշվ. աշխ., էջ 585 ծան. 5, **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 27-32, 62-70:

[2] Տե՛ս **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 27-32, 62-70, Николаев **A. C.**, նշվ. աշխ., էջ 298-299:

[3] Տե՛ս **Schindler J.**, L'Apophonie des thèmes..., p. 3-7, նաև՝ **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch…, Bd. I, S. 215:

ակրոստատիկ՝ հ.-ե. եզ. ուղղ. *krót-u-s, եզ. սեռ. *krét-u-s «մտավոր կարողություն, ուժ» (հմմտ. հ. հնդ. krátus «ուժ») ⇒ **պրոտերոկինետիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ. *krét-u-s, եզ. սեռ. *kr̥t-éu̯-s «մտավոր ուժ ունեցող, ուժեղ» (հմմտ. հուն. kratús «ուժեղ») և այլն[1],

պրոտերոկինետիկ՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. (*ḱérh₁s >>) *ḱérh₁os «աճ, աճելը, զարգացում» (հմմտ. հ. հայ. *սեր*, եզ. սեռ. *սերոյ* «ցեղ, ծագում, սերունդ») ⇒ **հիստերոկինետիկ**՝ եզ. ուղղ. (*ḱr̥h₁és >>) *ḱerh₁és (հմմտ. լատ. Cerēs «աճի և պտղաբերության աստվածուհին»), որտեղ արմատի լիաձայն աստիճանը ընդհանրացել է պրոտերոկինետիկ հիմքի համաբանությամբ[2]. հաճախ պրոտերոկինետիկ հիմքերը հիստերոկինետիկ տիպին են անցնում՝ հանդես գալով որպես բարդության երկրորդ բաղադրիչ[3]. հմմտ. հուն. ménos «ոգի, միտք» ⇒ eu-menḗs «բարյացակամ» և այլն,

պրոտերոկինետիկ՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *séh₁-mn̥ «սերմ, սերմանում» (հմմտ. լատ. sēmen «սերմ») ⇒ **հոլոկինետիկ**՝ ուժեղ ձևերի հիմք *séh₁-mon-, եզ. ուղղ. *séh₁-mōn (հմմտ. լատ. Sēmō «սերմի աստվածը») և այլն[4]:

Հիստերոկինետիկ հիմքերի անցումը հոլոկինետիկ տիպին հիմնականում վկայված է նրանց՝ որպես բարդության երկրորդ բաղադրիչ գործածությամբ. հմմտ. հուն. եզ. ուղղ. patḗr «հայր» ⇒ eu-pátōr «լավ, բարի հայր ունեցող», հ. հնդ. հոգ. ուղղ. pitáras «հայրեր» (-táras < *-tér-es) ⇒ tvátpitāras «քեզ որպես հայր ունեցեղները» (-tāras < *-tor-es, բաց վանկում հ.-ե. *o > հ. հնդ. ā հնչյունական անցմամբ[5]); հ. հայ. *անձն*, հոգ. ուղղ. *անձինք (-ին-ք* < *-én-es) ⇒ *միանձն,* հոգ. ուղղ. *միանձունք (-ուն-ք* < *-on-es) և այլն[6]:

Արդ, շեշտաձայնդարձային հարացույցների տեսությունը և ներքին բառակազմության տեսությունը հնդեվրոպական ձևաբանության և բառակազմության հնագույն օրինաչափությունների վերհանմամբ հնարավորություն են տալիս լուսաբանելու ցեղակից լեզուներում վկայված բազմաթիվ ծագումնային ընդհանրությունների իրական փոխհարաբերությունը, որն ավանդական հնդեվրոպաբանության շրջանակներում մնում էր անբացատրելի: Օրինակ, հ.-ե. *ǵonu-/*ǵenu- «ծունկ», *nok^{w}-t/*nek^{w}-t- «գիշեր, երեկո», *dom-/*dem- «տուն» և նման ձևերը, որոնք ավանդական հնդեվրոպաբանության տեսանկյունից պարզապես նշվում էին իբրև տարբերակային նախաձևեր, արդի հնդեվրոպաբանության մեջ դիտվում են որպես նույն հարացույցի (ակրոստատիկ I տիպի) ուժեղ և թույլ հիմքային ձևեր: Իսկ, ասենք, հ. հնդ.

---

[1] Տե՛ս **Nussbaum A.,** նշվ. աշխ., էջ 147, **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 65, 96-97:

[2] Տե՛ս **Schaffner S.**, նշվ. աշխ., էջ 586:

[3] Տե՛ս **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 66:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 32, 69:

[5] Տե՛ս **Meĭe A.**, նշվ. աշխ., էջ 311-312, **Mayrhofer M.,** Indogermanische Grammatik, Bd. I, 2. Halbband: Lautlehre [Segmentale Phonologie des Indogermanischen], Heidelberg, 1986, S. 146-148:

[6] Տե՛ս **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 70, նաև՝ **Harðarson J. A.**, նշվ. աշխ., էջ 221, ծան. 38:

krátus «ուժ» և հուն. kratús «ուժեղ» ձևերի կամ հուն. ménos «ոգի, միտք» և eu-menḗs «բարյացակամ», patḗr «հայր» և eu-pátōr «լավ, բարի հայր ունեցող», հ. հայ. *անձն,* հոգ. ուղղ. *անձինք* և *մի-անձն,* հոգ. ուղղ. *մի-անձունք* պարզ և բաղադրյալ ձևերի շեշտաձայնդարձային փոխհարաբերությունը լիովին հասկանալի է դառնում ներքին բառակազմության տեսության շնորհիվ:

Այսպիսով, եթե փորձենք ի մի բերել վերը կատարված քննության արդյունքները, ապա հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում ավանդական հնդեվրոպաբանության և արդի հնդեվրոպաբանության մոտեցումային առանձնահատկությունները կարելի է ընդհանրացված բնութագրել հետևյալ կերպ: Ըստ ավանդական մոտեցման՝ հ.-ե. բոլոր անբուն հիմքերի հոլովման և խոնարհման հարացույցներին սկզբնապես բնորոշ է եղել շարժական շեշտ և, դրան համապատասխան, ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայություն (ուժեղ ձևերում հիմքը հանդես է եկել լիաձայն աստիճանի, իսկ թույլ ձևերում՝ զրո աստիճանի ձայնավորմամբ), այսինքն՝ գործել է շեշտաձայնդարձային հերթագայության մեկ ընդհանուր օրինաչափություն: Մինչդեռ արդի հնդեվրոպաբանության շեշտաձայնդարձային հարացույցների տեսության համաձայն՝ հ.-ե. անբուն հիմքերի համար շեշտաձայնդարձային հերթագայությունների մի քանի տիպեր են վերականգնվում, որոնք միմյանցից տարբերվում են, մի կողմից, հարացույցի ներսում շեշտի կայուն կամ շարժական բնույթով, մյուս կողմից՝ ուժեղ և թույլ ձևերում շեշտի տեղաշարժի և ձայնդարձի օրինաչափություններով: Ըստ այդմ տարբերակվում են արմատական կայուն շեշտ ունեցող (ակրոստատիկ) հարացույցներ և շարժական շեշտով բնութագրվող (կինետիկ) հարացույցներ՝ ամֆիկինետիկ, պրոտերոկինետիկ, հիստերոկինետիկ և հոլոկինետիկ ենթատիպերով: Հատկանշական է նաև, որ ակրոստատիկ հարացույցների թույլ ձևերում հիմքը հանդես է գալիս ոչ թե զրո աստիճանի, այլ e լիաձայն աստիճանի ձայնավորմամբ: Շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում արդի հնդեվրոպաբանության մյուս կարևոր ձեռքբերումը ներքին բառակազմության տեսությունն է, ըստ որի՝ հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների տարբեր տիպերը բառակազմական փոխհարաբերության մեջ են գտնվում միմյանց նկատմամբ, այսինքն՝ հ.-ե. բառը, շեշտաձայնդարձային մի հարացույցից անցնելով մեկ այլ հարացույցի, արտահայտում էր նոր իմաստ:

Саргис Аветян – ***Внутрепарадигматическая роль акцентно-аблаутных чередований с точки зрения традиционной и современной индоевропейстики***

Статья посвящена рассмотрению характерных особенностей подходов традиционной и современной индоевропейстики в понимании акцентно-аблаутных закономерностей и их внутрепарадигматической роли в праиндоевропейском. Согласно традиционной точке зрения все праиндоевропейские атематические основы первоначально характеризовались одной общей закономерностью акцентно-аблаутного чередования: как в именных, так и в глагольных парадигмах сильные формы имели ударение на основе и полную огласовку основы, слабые же формы имели ударение на окончании и редуцированную (нулевую) огласовку основы. Однако имеются много отклонений от указанного принципа, которые не получают удовлетворительного объяснения в рамках традиционной теории. В современной индоевропейстике общепринято, что на самом деле есть несколько разных акцентно-аблаутных парадигм (акцентно-аблаутных классов), обнаруживающих разные акцентно-аблаутные чередования между сильными и слабыми формами. Разные акцентно-аблаутные парадигмы находятся в деривационном взаимоотношении друг с другом: в праиндоевропейском новые существительные и прилагательные могли образоваться с помощью перемещения ударения и, тем самым, перехода основы из одного акцентно-аблаутного касса в другой.

Sargis Avetyan - ***The Inner-paradigmatic Role of Accent-Ablaut Alternations from the Viewpoint of Traditional and Modern Indo-European Linguistics***

The article is devoted to the consideration of the specific characteristics of the traditional and modern Indo-Europeanistic approaches in understanding the accent-ablaut patterns and their inner-paradigmatic role in Proto-Indo-European. According to the traditional view, all PIE athematic stems were originally characterised by a general pattern of accent-ablaut alternation: in nominal as well as in verbal paradigms the stem was in the full grade and accented in strong forms, and the accent shifted to the ending, and the unstressed stem appeared in the zero-grade in week forms. However, there remain many deviations from the above principle which are not satisfacorily explained within the framework of the traditional theory. In modern Indo-European linguistics it is generally accepted that there are in fact a number of different accent-ablaut paradigms (accent-ablaut classes), showing different alternations between strong and week forms. The different accent-ablaut classes in PIE stand in a derivational relationship with one another: the language could derive new nouns or adjectives simply by shifting the accent and thereby changing the stem's accent-ablaut class membership.